Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

27-33.3-Ղ3-1 Վարչության պետ(2024-03-22)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

Ներքին գործերի նախարարություն | Աղետների և արտակարգ այլ իրավիճակների կառավարման վարչություն | Վարչության պետ, (27-33.3-Ղ3-1)

1.2 Ենթակա և հաշվետու է

Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է Ներքին գործերի նախարարին:

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ

Վարչության պետին անմիջական ենթակա և հաշվետու են Վարչության պետի տեղակալը և բաժինների պետերը:

1.4 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետի տեղակալը կամ բաժինների պետերից մեկը:

1.5 Աշխատավայր

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Նալբանդյան փ. 130:

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. կազմակերպում է աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման, հետաղետային վերականգնման ոլորտներում Նախարարության քաղաքականության իրականացման համակարգումը.
2. կազմակերպում է Նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների, գրասենյակի, Նախարարությանը ենթակա պետական մարմինների և Նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ մասնագիտական ստորաբաժանումներ) հետ համատեղ աղետների ռիսկի և արտակարգ այլ իրավիճակների կառավարմանն ուղղված ռազմավարական բնույթի փաստաթղթերի, նպատակային ծրագրերի իրականացումը.
3. կազմակերպում է աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման, հետաղետային վերականգնման ոլորտներին առնչվող տեղեկատվության հավաքագրման, ամփոփման և վերլուծման, անհրաժեշտության դեպքում՝ ոլորտային ուսումնասիրությունների կատարման աշխատանքները.

4. կազմակերպում է աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման, հետաղետային վերականգնման ոլորտների զարգացման հիմնախնդիրներով առաջարկությունների ներկայացման գործընթացը.
5. կազմակերպում է աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման, հետաղետային վերականգնման ոլորտներին առնչվող միջազգային ծրագրերով նախատեսված միջոցառումների մշակման աշխատանքների համակարգումը.
6. կազմակերպում է աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման, հետաղետային վերականգնման գործընթացների իրականացմանն ուղղված կարգերի, պլանների, ուղեցույցների, մեթոդական ձեռնարկների և այլ փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքները.
7. կազմակերպում է աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման, հետաղետային վերականգնման ոլորտների միջազգային ծրագրերով նախատեսված աշխատանքներին, համատեղ իրականացվող ծրագրերին, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, քննարկումներին, սեմինարներին և այլ միջոցառումներին մասնակցությունը.
8. կազմակերպում է արտադրական վտանգավոր օբյեկտների (այսուհետ՝ ԱՎՕ) ռեեստրի վարման աշխատանքները.
9. կազմակերպում է օրենքով սահմանված կարգով ԱՎՕ-ների ռեեստրի վերլուծման, դրա հիման վրա ամփոփ տեղեկատվության կազմման և պետական մարմիններին տեղեկատվության փոխանցման աշխատանքները.
10. կազմակերպում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տեխնածին վթարների, մահացու և ծանր ելքով արտադրական դժբախտ դեպքերի վերաբերյալ տեղեկատվության ստացման, հաշվառման և ամփոփման աշխատանքները.
11. կազմակերպում է տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացնող հավատարմագրված անձանց հաշվառման աշխատանքները.
12. կազմակերպում է վտանգավոր բեռների փոխադրումների կազմակերպման և իրականացման ապահովումը.
13. կազմակերպում է ԱՎՕ-ների վկայականների տրամադրման աշխատանքները:

Իրավունքները.

- անցկացնել աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման ոլորտի զարգացման հիմնախնդիրներով աղետների ռիսկի կառավարման ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ քննարկումներ, հանդիպումներ, խորհրդակցություններ, ներկայացնել մասնագիտական առաջարկություններ.
- պահանջել և ստանալ մասնագիտական ստորաբաժանումներից տեղեկատվություն արտակարգ իրավիճակների ոլորտի զարգացման հիմնախնդիրների վերաբերյալ,
- անցկացնել քննարկումներ աղետների ռիսկի կառավարման բնագավառի օրենսդրության կատարելագործմանն ուղղված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ մասնագիտական ստորաբաժանումներից ստացված առաջարկների շուրջ.
- պահանջել և ստանալ մասնագիտական ստորաբաժանումներից լրացուցիչ պարզաբանումներ, հիմնավորումներ և տեղեկատվություն աղետների ռիսկի կառավարմանն ուղղված ռազմավարական բնույթի նպատակային ծրագրերի, արտակարգ իրավիճակների ոլորտի միջազգային ծրագրերի իրականացման, ինչպես նաև արտակարգ իրավիճակների ոլորտի զարգացման հիմնախնդիրների վերաբերյալ.
- քննարկել արտակարգ իրավիճակների ոլորտի զարգացման հիմնախնդիրների վերաբերյալ մասնագիտական ստորաբաժանումներից ստացված առաջարկությունները.
- հրավիրել քննարկում աղետների ռիսկի կառավարման բնագավառը կանոնակարգող օրենսդրության կատարելագործման ուղղությամբ մասնագիտական ստորաբաժանումներից ստացված առաջարկությունների ուսումնասիրման և քննարկման արդյունքների վերաբերյալ.
- պահանջել և ստանալ տեղեկատվություն, փաստաթղթեր օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ արտակարգ իրավիճակների ոլորտին առնչվող միջազգային ծրագրերով հանդիպումներին, խորհրդակցություններին, սեմինարներին, քննարկումներին մասնակցելու նպատակով.
- պահանջել և ստանալ տեղեկատվություն աղետների ռիսկի կառավարման գործընթացների իրականացմանն ուղղված կարգերի, պլանների, ուղեցույցների, մեթոդական ձեռնարկների և այլ փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքների համար.
- ստուգել միջազգային ծրագրերով նախատեսված աշխատանքներին, համատեղ իրականացվող ծրագրերին, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, այլ միջոցառումներին մասնակցելու նպատակով ստացված տեղեկատվությունը.

- հրավիրել քննարկում հետաղետային վերականգնման ոլորտին առնչվող միջազգային փորձի ուսումնասիրման և ոլորտի կատարելագործմանն ու բարեփոխման նպատակով ներկայացված մասնագիտական կարծիքների, առաջարկությունների վերաբերյալ.
- պահանջել և ստանալ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ից և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հավատարմագրված և լիազոր մարմնի կողմից հաշվառված իրավաբանական անձանցից կամ անհատ ձեռնարկատերերից համապատասխան փաստաթղթեր ԱՎՕ-ի վկայական տրամադրելու, ռեեստրում գրանցելու կամ փոփոխություններ կատարելու համար.
- պահանջել և ստանալ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ից և տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացնող Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հավատարմագրված մարմիններից ԱՎՕ-ների փորձագիտական եզրակացությունները ռեեստրում մուտքագրելու, հաշվառելու և փորձագիտական եզրակացությունները համապատասխան թղթապանակներում պահպանելու համար.
- պահանջել և ստանալ տեղեկատվություն տեխնածին վթարների, մահացու և ծանր ելքով արտադրական դժբախտ դեպքերի վերաբերյալ հաշվառման և ամփոփման աշխատանքներն իրականացնելու նպատակով:

Պարտականությունները.

- հսկել աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման, հետաղետային վերականգնման գործընթացների իրականացմանն ուղղված կարգերի, պլանների, ուղեցույցների, մեթոդական ձեռնարկների և այլ փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատաքները.
- հսկել մասնագիտական ստորաբաժանումներից աղետների ռիսկի կառավարմանն առնչվող տեղեկատվության ստացման գործընթացը, ամփոփել արդյունքները.
- հսկել աղետների ռիսկի կառավարման բնագավառի զարգացման ռազմավարական բնույթի յուրաքանչյուր փաստաթղթերով նախատեսված միջոցառումների, ինչպես նաև առանձին հանձնարարականների կատարման որակը, ամբողջականությունն ու ժամկետների պահպանումը, վերլուծել հանձնարարականների կատարողականի վերաբերյալ հաշվետվությունները.
- վերահսկել մասնագիտական ստորաբաժանումների հետ համատեղ աղետների ռիսկի կառավարման գործընթացների իրականացմանն ուղղված ուղեցույցների, մեթոդական ձեռնարկների և այլ փաստաթղթերի մշակմանը աշխատանքներ.
- հսկել արտակարգ իրավիճակների ոլորտի միջազգային ծրագրերով նախատեսված միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության ամփոփման, վերլուծությունների կազմման, հաշվետվությունների պատրաստման աշխատանքները.
- վերահսկել արտակարգ իրավիճակների ոլորտի համատեղ իրականացվող միջազգային ծրագրերի իրականացման ընթացքը, կազմակերպել քննարկումներ արդյունքների վերաբերյալ ներկայացված հաշվետվությունների առնչությամբ.
- ներկայանալ օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման, հետաղետային վերականգնման ոլորտներին առնչվող միջազգային ծրագրերով հանդիպումներին, խորհրդակցություններին, սեմինարներին, քննարկումներին, ներկայացնել մասնագիտական առաջարկություններ ոլորտի խնդիրների լուծման վերաբերյալ.
- վերահսկել աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման, հետաղետային վերականգնման ոլորտներում Նախարարության քաղաքականության իրականացման, ոլորտների զարգացման, կատարելագործման և բարեփոխման գործընթացները.
- վերահսկել աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման, հետաղետային վերականգնման ոլորտներում ուսումնասիրությունների իրականացման աշխատանքները.
- հսկել աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման, հետաղետային վերականգնման գործընթացների իրականացմանն ուղղված կարգերի, պլանների, ուղեցույցների, մեթոդական ձեռնարկների և այլ փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքները.
- հսկել հավանական ռիսկերի վերաբերյալ իրականացված վերլուծությունները և գնահատումը, հետաղետային վերականգնման ոլորտի վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.
- վերլուծել և գնահատել հետաղետային վերականգնման ոլորտին առնչվող միջազգային փորձի ուսումնասիրման արդյունքները, ոլորտի կատարելագործման և բարեփոխման նպատակով ներկայացված համապատասխան նյութերը.
- հսկել հետաղետային վերականգնման ոլորտին առնչվող միջազգային ծրագրերով նախատեսված միջոցառումների մշակման աշխատանքները.
- վերահսկել ԱՎՕ-ների ռեեստրում գրանցման ենթակա Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող ԱՎՕ-ների հաշվառման, ինչպես նաև դրանց վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունների գրառման աշխատանքները.

- հսկել ԱՎՕ-ների ռեեստրի հիման վրա տեղեկատվության կազմման և այն համապատասխան պետական մարմիններին տրամադրման աշխատանքները.
- վերահսկել ստացված տեխնածին վթարների, մահացու և ծանր ելքով արտադրական դժբախտ դեպքերի վերաբերյալ տեղեկատվության հաշվառման, ամփոփման և արխիվացման աշխատանքները.
- հսկել վտանգավոր բեռների փոխադրումների կազմակերպման և իրականացման աշխատանքները.
- ստուգել բացասական փորձագիտական եզրակացություն ստացած ԱՎՕ-ների ցանկի և այլ համապատասխան տեղեկատվությունների վերլուծությունը՝ վերահկողություն իրականացնող համապատասխան մարմնին տրամադրելու նպատակով.
- վերահսկել ԱՎՕ-ների վկայականների տրամադրման աշխատանքները:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն**:**

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Բարեվարքություն
  - Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
  - Որոշումների կայացում
  - Ծրագրերի կառավարում
  - Աշխատակազմի կառավարում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Կառավարում արտակարգ իրավիճակներում
  - Բանակցությունների վարում
  - Փոփոխությունների կառավարում
  - Կոնֆլիկտների կառավարում
  - Ժամանակի կառավարում
  - Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց և մարմինների վրա ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ: